ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԵԼԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բայն ինքնին լեզվափիլիսոփայական և հոգելեզվաբանական կարգերի ուսումնասիրության համար լավագույն նյութերից է:

Հոգեբանական և իմացական տեսանկյուններից բայը լեզվի առաջնային միավորներից է, քանի որ անփոխարինելի միավոր է մարդկային գոյության, այսինքն՝ անցյալ վիճակի, գործունեության՝ ներկա վիճակի և գոյատևման՝ ապառնի վիճակի լեզվական արտացոլման համար:

Եթե ժամանակի կարգը գործողությունը, ընթացքը, շարժումն է որոշակի ժամանակահատվածում, ապա կերպը արդեն ժամանակի ազդեցությունը կրած գործողության ներկայացումն է:

Լեզվական ձևը խոսքային միջավայրում շրջապատված է տարբեր մակարդակի միավորներով, որոնք արժեքավորում են այս կամ այն համատեքստային նշանակությունը:

Խոսքի, ասույթի ասպեկտով դիտելիս լեզուն դառնում է լեզվական միջոցների համակցման մի բարդ համակարգ, որի մեջ լեզվական մեկ միջոցի գոյությունը պայմանավորվում է մեկ այլ միջոցի գոյությամբ:

Որքան էլ հարուստ ու բազմազան լինի քերականական ձևի իմաստային փունջը, այնուհանդերձ այդ հատկանիշներից միայն մեկն է հատկանշվում հաղորդման հիմնական գործառույթով: Նույն կարգային նշանակությունը համատեքստում կարող է ստանալ տարբեր երանգավորումներ, որն էլ նրա գործառույթային նշանակությունն է: Կարգային նշանակությունը լեզվական է, իսկ գործառույթայինը՝ խոսքային: Գործառույթը լեզվական միավորի այս կամ իմաստն արտահայտելու ունակությունն է: Մի դեպքում նրանք համապատասխանում են, մյուս դեպքում՝ տարբերվում: Օրինակ՝ ներկան ներկայի նշանակությամբ լեզվականն ու խոսքայինը համընկնում են, իսկ ներկան անցյալի նշանակությամբ լեզվականն ու խոսքայինը տարբերվում են, որոշ իմաստով նույնիսկ հակադրվում: Լեզվական ու խոսքային նշանակությունները ունեն առաջնային ու երկրորդային իմաստներ:

Ցանկացած բայածևի նշանակությունները հավասարազոր, հավասարարժեք չեն: Դրանք խմբավորվում են առաջնային-հիմնական և մասնավոր-երկրորդական նշանակություններով: Գլխավոր նշանակությունն այն կենտրոնածիգ ուժն է, որի նշանակությունը հանդես է գալիս որպես անփոփոխակ, քանի որ ցանկացած գործոնի ազդեցությամբ նույն քերականական ձևը,

փոփոխելով իր նշանակությունը, ձեռք է բերում նոր իմաստ: Առաջնայինը մշտապես ուղեկցում է տվյալ քերականական ձևին, իսկ երկրորդայինը հայտնվում է միայն համատեքստում:

Բայական յուրաքանչյուր ժամանակ, բացի հիմնական կիրառություններից, ունի նաև հարաբերական կիրառություններ, այսինքն՝ հանդես է գալիս այլ ժամանակների իմաստով, որոնք բային տալիս են ոճական երանգավորում, վերաբերում են ոճաբանությանը:

Յուրաքանչյուր առանձին միտք արտահայտելիս խոսողը խոսքի բովանդակության, բայով արտահայտված գործողության նկատմամբ ունեցած վերաբերմունքի պահանջով, խոսքային զանազան պայմանների թելադրանքով որևէ եղանակաժամանակային ձևի փոխարեն գործածում է այլ եղանակաժամանակային ձև, դիմում է նաև երկրորդական կիրառություններին:

Գործողության առաջնային երեք տարրերի՝ տեղի, ժամանակի, մասնակցի և հաղորդակցման համընկնումը վկայում են ներկա ժամանակի մասին, սակայն անհերքելի է, որ գործողության և հաղորդակցման լիարժեք համընկնում լինել չի կարող, որովհետև մարդու ընկալման և լեզվական գիտակցման միջև առկա է երևույթների մի ամբողջ շղթա:

Ցանկացած, նույնիսկ ժամանակի տեսանկյունից ակնթարթային գործողություն իրականում նախորդում է օբյեկտիվ ներկա ժամանակային տիրույթին, քանի որ ներկան կարող է ընկալվել որպես գործողության առկա գիտակցում, որի համար նույն այդ գործողությունը անցյալի մի եղելություն է: Հետևաբար ներկան իմաստային հիմք է, որն ունի գործնականում ձևական կապակցվածություն բուն գործողության ընկալման և լեզվական վերարտադրության հետ: Հենց այս պատճառով քերականության մեջ ներկա ժամանակն ունի համեմատաբար լայն իմաստային ներուժ, որով էլ պետք է բացատրել ներկա ժամանակի այդքան լայն քերականական իմաստների և ոճական կիրառությունների առանձնահատկությունները: Ներկան ժամանակային տեսանկյունից ավելի մեծ տիրույթ է ներառում, քան հաղորդակցման պահն է, ցույց է տալիս նաև ներկա, առկա, մեր կենդանության օրոք կատարվող, կրկնվող գործողություն:

Ներկա ժամանակով են արտահայտվում բոլոր ժամանակների համար (որի մեջ է և խոսողի ներկան) ընդունելի ճշմարտությունները (մշտական կամ ընդհանրական ներկա): Օրինակ՝

Մարդը բանական էակ է:

Ընդհանրական ներկա ժամանակը ներկայանում է որպես գիտական ոճի դրսևորում (գիտական բնորոշումներ, սահմանումներ): Կիրառվում է

ամենօրյա երևույթները, աշխարհագրական տեղագրություններն արձանագրելու համար: Օրինակ.

Լեզուն և խոսքը փոխհաջորդում են իրար:
Արագած լեռան ստորոտին է գտնվում Աղձք գյուղը:

Առածական ներկայով արտահայտվում են ընդհանուր կարծիքներ, առածներ, իմաստալից խոսքեր: Օրինակ.

Օձը տաքացողին է կծում:
Պտուղը ծառից հեռու չի ընկնում:
Փոսը փորողը մեջն է ընկնում:
Հոգին հոգով են բուժում:

Առածներում և առածական ասացվածքներում ընդհանրական ներկայի փոխարեն կիրառվում է ենթադրական ապառնին՝ լսողին թողնելով դրանից մի ընդհանուր ճշմարտություն վերհանել: Սահմանական ներկայով փորձից հանված ճշմարտությունն է հայտնվում իբրև իրական, ստույգ դատողություն, իսկ ենթադրականով նույն ճշմարտությունն է հայտնվում, միայն ոչ իրական, բացարձակ ձևով, այլ ենթադրելով, կարելի համարելով, իբրև մեղմ հաստատություն: Օրինակ. *Փոսը փորողը մեջը կընկնի: Պտուղը ծառից հեռու չի ընկնի: Շատ իմացողը քիչ կխոսի: Ով ինչ ցանի, այն կհնձի:*

Սինչդեռ բացարձակ ճշմարտությունները, քանի որ ենթադրությամբ ասել չի լինի, բնականաբար, ենթադրական եղանակով չեն փոխարինվում:

Հետաքրքիր է, որ այս նշանակությամբ երբեմն գործածվում են նաև վաղակատարն ու անցյալ կատարյալը, երբ անցյալով արտահայտվում է մի որոշ դեպք, որ մի անգամ անցյալում կատարվել է, կարող է և ամեն ժամանակ կատարվել: Օրինակ. *Գայլի գլխին ավետարան կարդացին...*

Փոսը փորողը մեջն ընկավ:

Խոսողի ներկայությամբ չկատարված անցյալ երևույթների պատմելու բուն ժամանակն է վաղակատարը: Օրինակ.

Մ. Մաշտոցը իր հայտնաբերած տառերով վերադարձել է Հայաստան: Նրան մեծ ցնծությամբ ու տոնախմբությամբ է դիմավորել հայոց մայրաքաղաք Վաղարշապատը:

Այս ժամանակը, սակայն, քիչ է գործածվում իբրև անխառն պատմական ժամանակ, քանի որ խոսքը դանդաղում է, զրկվում կենդանությունից: Վաղակատարին հաճախ փոխարինում է ներկա ժամանակը (կամ անցյալ կատարյալը): Ներկայով պատմելիս մեր երևակայության մեջ գործողությունն անցյալից տեղափոխվում է խոսողի ներկա, և անցյալ գործողություններն այնպես ենք պատկերացնում, որ իբր աչքի առաջ պատմելու վայրկյանին կենդանի կատարվում են: Օրինակ.

Մաշտոցը իր հայտնաբերած տառերով վերադառնում է Հայաստան: Նրա գործունեությամբ սկիզբ է առնում հինգերորդ դարի վիթխարի գրական-մշակութային շարժումը:

Այս գործածության մեջ ներկան (պատմական ներկան) կորցնում է իր անկատար տևական բնույթը՝ արտահայտելով սոսկ անցյալ գործողություն: Պատմական ներկան կոչված է ներկայացնելու անցյալի գործողությունը որպես իրական, ներկայումս կատարվող. Խոսողը իրազեկ է դառնում անցյալի գործողություններին, ակամայից վերապրում է կատարված եղելությունը: Հայերենում ներկան անցյալի իմաստով կարող է հաղորդել հաջորդող գործողություններ:

Ներկա ժամանակը կարող է գործածվել նաև ապառնի ժամանակի փոխարեն: Կիրառվում է՝ հաղորդելու մի այնպիսի գործողություն, որի ստույգ և անվերապահ կատարմանը խոսողը լիովին համոզված է և որ այն անխուսափելի է: Սակայն այս գործածությունների հաճախականությունը մեծ չէ, հիմնականում ներկայի հետ ապառնիի ժամանակային ցուցիչներ են գործածվում: Օրինակ՝

Վաղը մեկնում եմ Իտալիա:

Ոճաբանական նշանակություն ունեն նաև անցյալ կատարյալի՝ ապառնի իմաստով կիրառությունները, որոնք խիստ սահմանափակ են: Գործածվում են միայն այն դեպքերում, երբ խոսողը ստույգ համոզված է, որ սպասվող գործողությունը կկատարվի: Հիմնականում կիրառվում է բարդ ստորադասական նախադասություններում, որի ստորադասական բաղադրիչը պայմանի պարագա է: Օրինակ. *Եթե հարցրեց, ի՞նչ պատասխանենք:*

Բայի եղանակաժամանակային ձևերի կիրառությունները ընդհանուր լեզվական բնույթ են կրում:

Բազմիմաստության պայմաններում համատեքստը միակ որոշիչ գործոնն է, որը նպաստում է համապատասխան լեզվական միավորի ճշգրիտ, անհրաժեշտ նշանակության հայտնաբերմանը: Ավելին՝ բազմաթիվ ոճական երևույթներ իրենց կոնկրետությունը գտնում են միայն ասույթում՝ խոսքային ավելի մեծ ամբողջության մեջ, քան նախադասությունն է կամ պարբերույթը: Ասույթը լեզվամտածական այն միավորն է, որի մեջ նախադասությունները միմյանց կապվում են ոչ միայն քերականական, այլև տրամաբանական կապով: